և ընդարձակ մարգագետին։ Այս տեղ հայաբոյսը չաճիր կասեն, բայց կերևին ի վաղուց մնացած վարած հողեր։

2. Կէօղէլ-Տէրէ (գեղեցիկ ձոր)—Զաթ գիւղէն $^1/_2$ ժամ և Ջրից հարաւ, ունի 5 տուն քուրդ բնակիչ, նոյն դիրքով։

3. Խարապա ճիհան բէկ։—Կէօղէլ-Տէրէի $^3/_4$ ժամ հարաւն նաև Ջրէն $^3/_4$ ժամ հարաւ 15 տուն Սուէ-տանցի քուրդ գաղթականներ են, որք Բասեանի Հօփ-վերան գիւղէ գաղթած են։

4. ճիհան բէկ.—Խարապա ճիհան բէկի հիւսիսն է $^1/_2$ ժամ. Կէօղէլ-Տէրէի 1 ժամ արևելքն է, Ջրէն $^3/_4$ ժամ. ունի 10 տուն, ք. բնակիչ։

5. Ավ-պաղայ.—ճիհան բէկից 1 ժամ արևելք, Ջրից $^1/_2$ ժամ հարաւ՝ 22 տուն ք. բնակիչ։

6. Բէօլիւք-պաշի.—Ջրի աջ ափին վերայ, Ավ.պա-ղայից $^3/_4$ ժամ արևելք, ունի 65 տուն ք. բնակիչ։

7» Կասկան.—$^1/_4$ ժամ Բէօլիւք պաշիի արևելքն, Ջրից և նոյն չափ մի հեռու, ունի 15 տուն քուրդ բնակիչ։

8. Տելիքի.—Խալեազի արևմտեան ծայրը, որ և կընկրնի Բասեանի սահմանի վերայ ուղղակի Ջրի եզրին վերայ 30 տուն ք. բն. ունի։

9. Զչկանի (քառասուն աղբիւր).—1 ժամ Տելի-քիի արևելքն Ջրի $^1/_4$ ժամ հիւսիսն 5 տուն ք. բն. ունի։

10. Սարէ.—1 $^1/_2$ ժամ Զչկանուայ արևելքն ուղ-ղակի Ջրի եզրն՝ 17 տուն ք. բն. ունի։

11. Ղարա-Պաճախ (սևասրունգ).—Սարէից 1 ժամ արևելք, $^3/_4$ ժամ Ջրի հիւսիսն 11 տուն ք. բն.